

Մի բան որ եղականացնում է Դատու-
րեանը, այդ էլ է նրա օտար բանաստեղծու-
թիւններ թարգմանելու տաղանդը, որը չի
կորցնել տայ բնագրին վարկը յանգի ամանակի
կամ նոյն իսկ աւելի տեսակետից: Դա յիշատի
մի եղական ձիւրք է, որը օրէցօր օգտաւէտ է
լինելու Հայ հասարակութեան, մանաւանդ այն
ստուարագոյն մասսային, որոնց մերձեցնելի չէ
ուս լեզուն: Գործիս այս բ. հատորը, կը բո-
վանգակէ Կոյցով, Ներկասով, Նիկիտին եւ
Պլեշչինով ժողովրդական ազգային բանաստեղծ-
ների գործերից թարգմանութիւններ, բայց
միայն ոտանաւորների՝ ոտանաւոր թարգմանու-
թիւններ: Դատ.ի ինքնագիր բանաստեղծու-
թեանց մասին դժար չէ միջակցեցնել, եւ նաեւ
գերազանցողներ ցոյց տալ, եւ տաճկահայ ներ-
կա գրական գէմբերից. բայց երբ խօսքը
թարգմանութեան գայ, մենք միջանակը Դատ.ի
ենք վերապահում: Դ.ի առաւելութիւնը կը
փայլի մանաւանդ՝ երբ վեր առնենք նաեւ այս
թարգմանութեան Հեղինակների պայմանները:
Դրանք, մանաւանդ առաջին երեքը, մասնական
տեղային ժողովրդական բանաստեղծներ են,
որոնց մէջը տիրում է մի բնորոշ յատկութիւն,
եւ ուրոյն է ամէն մի ազգի ամէն մի ժողովրդի
համապատասխան ժամանակին եւ կարիքին:
Մի քիչ թարգմանութեամբ պարապողը լաւ
կ'իմանայ, թէ որչափ դժուարին է նոյն իսկ ար-
ձակ գրութեան մէջ մի օտար ինքնուրոյն առու-
թիւն, որիչեւ անգամ մի բառ՝ համապատաս-
խան բացատրութիւնով եւ բառով թարգմա-
նել, եւս առաւել բանաստեղծութեան մէջ ուր
կաշկանդուած է գրիչը յանգերով եւ ոտքե-
րով: Չնայելով որ Դ.ի վիճակուած էր մի
այսպիսի դժուար գործ՝ ընթերցողը այս թարգ-
մանութեան մէջ կը գտնէ բուն Հեղինակին
ոգին, որպէս թէ հայերէն գրուած էինէր: Ահա
թէ ինչու մէ կայանում թարգմանչին արժա-
նիքը: Փորձի համար թող հաճի ընթերցողը
առնուլ (կոյցովէն) "Շինականի մառնմունքը",
սահուն է եւ հաճոյական՝ իւր բնիկ բացատրու-
թիւններով, կան անտեղ այն բառերի փոփո-
խութիւններ՝ բայց այդ իսկ է իւրացնելու ա-
րուեստի ծանուցիչը: Այս միւսնոյն ժամանակ՝
ամբողջ գործի նկարագիրն (caractère) է:

Մեծ է Դատուրեանցի այս թարգմանու-
թիւններով ազգին մատուցած ծառայութիւնը,
որչափ գովելի է հասարակութեան օգտաւէտ՝
բայց թաքուն իրի մը գիւտը: Այդպէսով է
եղել ամէն ազգի գրական կենաց սկիզբը եւ

յառաջդիմութեան իմանը. ինչպէս յայտնի է
մեր իսկ գրականութեան ծագումից: Կայ սա-
կայն դեռ մի ինչ որ բաղձալի եւ յանձնելի կը
մնայ, այն է եւ արձակ գեղեցիկ եւ օրինակելի
գրութեանց թարգմանութեան հաւաքածոյներ,
որոնք հաղիւ. թէ կան մեր մէջ, եւ առհասա-
րակ անպէտ են նկատուում: Մինչդեռ ինքնուրոյն-
քեան աւելի օգտաւէտ կարող է լինել արձակը,
ճարտասանական, գեղարուեստական, ճաշակա-
գիտական տեսակետից, եւ այդ պակասը զգալի
է մանաւանդ մեր ուսումնարաններում: Որպէս
մի օրինակելի հատուած ներդրի մեզ յառաջ
բերել Ն. Մմրինսկու "Բարի Հովիւ", թարգ-
մանութիւնը, ցոյց տալու համար թէ նոյն իսկ
ուս գրականութեան մէջ պակաս չեն գրու-
թիւններ, որոնցից մի փոքր հաւաքածոյ կը
յաւելու մեր Հայ պատանեկաց մտաւոր պաշարը:

Բ Ա Ր Ի Հ Ո Վ Ի Ւ

(Ն. ՄՄՈՒՆՍԿՈՒ)

Նիփսոսի տաճարում մատուցվում
էր պատարագ:

Տօն օր էր, եւ տաճարը լի էր աղօ-
թողներով... Տիմոթէոս եպիսկոպոսը,
Պօղոս Առաքեալի աշակերտը, կատարում
էր սպասարարութիւնը:

Նիփսոսի քրիստոնեանները, ուր հաւա-
տացեալների թիւը օրէցօր աճում էր,
վայելում էին կատարեալ խաղաղութիւն
եւ անդորրութիւն. սարսափելի հալածանք-
ները, որոնք տեղի ունէին Հռոմում ներո-
նիս հրամանով, դեռ եւս չէին հասել Փոքր
Ասիոյ եկեղեցիներին, եւ այստեղ քրիստո-
նեանների դէմ հալածանքներ չկային:

Պաշտամունքից յետոյ Տիմոթէոս
եպիսկոպոսը բարձրացաւ սեղանի վրայ եւ
սկսեց խօսել քարոզ:

Տաճարում տիրում էր կատարեալ
խաղաղութիւն, որը խանգարվում էր
միայն քարոզչի ճայնով:

Յանկարծ ներսի դուռը բացուեց, եւ
չէմքի վրայ երեւաց մի շոկատ զօրքի:
Հուռեց գէնքի շառաշիւն, եւ շանցաւ եւ մի
քանի բուլէ, ինչպէս ամբողջ տաճարը
շղթայուեց զինուորներով:

Անձնապահ զօրաց սպան մօտեցաւ եպիսկոպոսին եւ, իջեցնելով նրան սեղանից, բարձրածայն ասաց՝ տալով երկար փաթաթոցը.

— Ներոն կայսրը ուղարկում է քեզ սոյն հրամանը: Գարգաւ.

Տիմոթէոսը բացարեց փաթաթոցը եւ սկսեց կարդալ բարձրածայն: Հրովարտակի մէջ Ներոնը հրամայում է Սփեսոսի Տիմոթէոս եպիսկոպոսին եւ այդ քաղաքի բոլոր քրիստոնեաներին յանձնել տարագիր-քրիստոնեաներին, որոնք փախել էին Հռոմից՝ կայսեր հալածանքից ազատ մնալու համար: Ներոնը պահանջում էր կատարել իր հրամանը եւ, չհնազանդուելու դէպքում՝ երկիւղ էր տալիս կախաղաններով:

— Ո՛չ, — հանդարտ եւ անյողողող կերպով ասաց Տիմոթէոսը, վերջացնելով ընթերցումը, — մենք չենք կարող կատարել նրա հրամանը:

— Ասա՛ կայսրին, որ մենք աւելի պատրաստ ենք մեռնել մինչեւ վերջինը, քան թէ յանձնել մեր եղբայրներին:

Եւ բոլոր ներկայ եղողները բարձրածայն պատասխատեցին.

— Ամէն...

Սպան սկսեց համոզել եպիսկոպոսին փոխել իր որոշումը, ասելով, որ իւրաքանչիւր մարդու պարտքն է, լինի նա քրիստոնեայ կամ՝ հեթանոս, հպատակուել օրէնքին, — սակայն Տիմոթէոսը մնաց անդդուելի:

— Ես գիտեմ, — ասաց նա, — որ խոնարհութիւնը եւ հնազանդութիւնը — մեր պարտքն է: Սակայն մենք պէտք է հպատակուենք միայն օրինաւոր պահանջներին, որոնք ընդդէմ չեն մեր խղճի եւ Քրիստոսի պատուէրներին, իսկ կայսրը պահանջում է մեզանից անպատուաբեր վարմունք, որոնց մենք չենք կարող համաձայնուել...

Երկար դեռ փորձում էր սպան դարձնել եպիսկոպոսին, բայց նրա բոլոր ջանքերը ի դերեւ ելան:

— Այն ժամանակ ես պէտք է դիմեմ խիստ միջոցների — աղաղակեց զայն րացած սպան:

Եւ արձակեց զարհուրելի հրաման...

Ջինուրները մերկացրին իրենց սուրերը, շառաչեց զէնքը, եւ հոսեց արիւնը:

Քրիստոնեաները անտրտուն թափւում էին հարուածների տակ, տղամարդիկ յառաջ էին գցում իրենց, աշխատելով պաշտպանել կանանց ու երեխաներին... Ծշով, աղաղակով, վայնասուտով, լաց ու կոծով լեցուեցաւ տաճարը:

Եպիսկոպոսը կանգնած էր հէնց այդ տեղ. նրա ետեւը շատ մօտիկ կար մի փոքրիկ դուռ. որտեղից նա կարող էր իրեն փրկել... Սակայն Տիմոթէոսը յառաջ անցաւ, ուր տեղի ունէր իսկապէս կոտորածը... եւ դիմեց սպային, խնդրելով մի բռնելով դադարեցնել ընդհարումը: Նա կարծեց թէ Տիմոթէոսը ուզում է կատարել նրա պահանջը, հրամայեց զինուորներին կանգ առնել:

Այն ժամանակ եպիսկոպոսը կանգնեց հաւատացեալների առջեւ եւ խաղաղ կերպով ասաց.

— Նախ քան հօտը ցրուելը, սպանի՛ր հովին...

Խորին լռութիւնը տիրեց շուրջը: Բոլորի հայեացքները դարձան դէպի Տիմոթէոսը՝ անզէն կանգնած կատաղած զօրքի առջեւ: Յուզումը ցուլաց սպայի դէմքի վրայ, նա ականաւ ցած գցեց աչքերը Տիմոթէոսի՝ իր վրայ դարձրած մեղմ հայեացքի առջեւ եւ, նշան անելով զինուորներին, նրանց հետ լուռ դուրս եկաւ տաճարից:

Որոշակ. Թարգմ. ԼՍՏ. Բէյ-ՅՈՎԱԼՓԵՆՆ

Կարս. #1 Յուլի, 1907: